ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# ՈՐՈՇՈՒՄ

-- սեպտեմբերի 2020 թվականի №---Ա
ք.Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 31-Ի №288Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը, 30-րդ հոդվածի 1-ին մասը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը, այդ թվում՝ կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետը, և հաշվի առնելով «ԷՐԻԷՄ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2020 թվականի օգոստոսի 25-ի գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Վեց ամսով երկարաձգել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2007 թվականի հուլիսի 20-ի «ՄՏՔԻ ԲԱՆԱԼԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «ՌԻՆԴ» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման լիցենզիա տրամադրելու մասին» №311Ա որոշմամբ «ՄՏՔԻ ԲԱՆԱԼԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված և հանձնաժողովի 2013 թվականի հուլիսի 31-ի «ՄՏՔԻ ԲԱՆԱԼԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության №0257 լիցենզիան վերաձևակերպելու մասին» №288Ա որոշմամբ «ԷՐԻԷՄ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության անվամբ որպես էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա վերաձևակերպված №0257 լիցենզիայով ամրագրված «Ռինդ» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը՝

որոշման մեջ «մինչև 2020 թվականի սեպտեմբերի 25-ը» բառերը փոխարինելով «մինչև 2021 թվականի մարտի 25-ը» բառերով:

2. «ԷՐԻԷՄ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ №0257 լիցենզիայի պայմանները չկատարելու պատճառով «Ռինդ» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝
   1) մեկամսյա ժամկետում «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերության 2020 թվականի ապրիլի 8-ի թիվ 652-4785 գրությամբ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացված ՀԲԵՆ20/60-01 երաշխիքի համաձայն երաշխավորված 5 080 000 (հինգ միլիոն ութսուն հազար) դրամ գումարից 2 540 000 (երկու միլիոն հինգ հարյուր քառասուն հազար) դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.
   2) քառասունհինգօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացնել 5 080 000 (հինգ միլիոն ութսուն հազար) դրամ գումարի երաշխիք՝ մինչև 2021 թվականի մայիսի 9-ը գործողության ժամկետով:
3. «ԷՐԻԷՄ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի սեպտեմբերի 25-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- սեպտեմբերի 2020թ.